

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության մրցույթի մասին

ՀՀ Արագածոտնի մարզպետարանը հայտարարում է ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներն իրականացնող կազմակերպությունների ընտրության մրցույթ՝ հետևյալ թափուր ավտոբուսային /միկրոավտոբուսային/ երթուղիների համար՝

Երթուղու				
Անվանումը և համարը	սկզբնական կետը	վերջնական կետը	տեսակը	Սպասարկման համար պահանջվող ավտոբուսների (միկրոավտոբուսների)թիվը
Աշտարակ-Կոշ-Վերին Սասունիկ-Լեռնարոտ	Աշտարակ	Լեռնարոտ	ավտոբուսային (միկրոավտոբուսային)	2
Նորաշեն-Ապարան-Աշտարակ	Աշտարակ	Նորաշեն	ավտոբուսային (միկրոավտոբուսային)	2
Թլիկ-Արագածավան-Դաշտադեմ-Թալին	Թլիկ	Թալին	ավտոբուսային (միկրոավտոբուսային)	2
Նոր-Արթիկ-Թալին-Աշտարակ	Նոր-Արթիկ	Աշտարակ	ավտոբուսային (միկրոավտոբուսային)	2
Նոր Ամանոս-Արուն-Շամիրամ-Աշտարակ	Նոր Ամանոս	Աշտարակ	ավտոբուսային (միկրոավտոբուսային)	2

Ցանկ

Մրցույթի մասնակցության համար անհրաժեշտ փաստաթղթերի

1. Հայտ
2. Ընդհանուր օգտագործման ուղևորատար ավտոմոբիլային տրանսպորտով կանոնավոր փոխադրումների կազմակերպման լիցենզիա.
3. Կազմակերպության կամ անհատ ձեռնարկատիրոջ պետական գրանցման վկայական.
4. Ավտոբուսների տեխնիկական անձնագրեր.
5. Ավտոբուսներին ամրակցված վարորդների՝ վարորդական իրավունքի վկայականներ, աշխատանքային փորձը հավաստող փաստաթղթեր, սահմանված կարգով բժշկական հանձնաժողովի կողմից տրված՝ առողջական վիճակի մասին տեղեկանքներ.
6. Ավտոբուսի վարձակալման դեպքում՝ վարձակալության պայմանագիր.
7. Ավտոբուսն այլ տեսակի վառելիքով շահահագործելու համար վերասարքավորելու դեպքում՝ շահագործման և վերասարքավորման օրինականությունը հաստատող փաստաթուղթ.
8. Ավտոբուսի վարորդի՝ սեղմված բնական կամ հեղուկ գազով աշխատելու դեպքում՝ օրինականությունը հաստատող փաստաթուղթ.

9. Ավտոբուսների նախաուղերթային տեխնիկական զննման և բուժզննման աշխատանքների իրականացման հետ կապված անհրաժեշտ փաստաթղթերը և հիմքերը՝ գործող մրցութային կարգով պահանջվելու դեպքում.

10. Կազմակերպության կամ անհատ ձեռնարկատիրոջ շարժական կազմի հավաքակալանի սեփականության իրավունքի պետական գրանցման վկայական՝ գործող մրցութային կարգով պահանջվելու դեպքերում, ինչպես նաև ավտոբուսների ամենօրյա նախաուղերթային տեխնիկական զննումը, դրանց կայանումը և պահպանումն իրականացնելու պայմանագիր՝ գիշերակացով սպասարկվող երթուղիների համար.

11. Փակ ծրարով ներկայացնում է երթուղու սպասարկման համար առաջարկվող մեկ ուղևորի և ուղեբեռի փողադրման գինը, իսկ միջմարզային և ներմարզային երթուղիների համար՝ նաև ըստ նախատեսված միջանկյալ կանգառների:

Նշված փաստաթղթերի պատճենները ներկայացվում է մեկ օրինակից, կազմակերպության կամ անհատ ձեռնարկատիրոջ կողմից սոսնձված, կնքված և ստորագրված, իսկ անհատ ձեռնարկատիրոջ կնիք չունենալու դեպքում՝ սոսնձված և իր կողմից ստորագրված փաթեթով: Փաթեթի փաստաթղթերը պետք է նույնպես կնքված լինեն հայտատու կազմակերպության կամ անհատ ձեռնարկատիրոջ կողմից՝ իսկականի հետ ճիշտ է՝ գրառմամբ և ստորագրությամբ, իսկ անհատ ձեռնարկատիրոջ կնիք չունենալու դեպքում՝ իսկականի հետ ճիշտ է՝ գրառմամբ և ստորագրությամբ, ինչով հավաստվում է դրանց իսկությունը:

Մրցույթը անցկացվում է 2016թ նոյեմբերի 25-ին ժամը 12.00-ին <<Աշտարակի ԱՏՃ >> ՓԲԸ-ում <այտերը ընդունվում են << Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի տրանսպորտի և ճանապարհաշինության բաժնում ամեն օր ,բացի շաբաթ և կիրակի օրերից ժամը 9.00-ից մինչև ժամը 18.00-ն:

<այտերը ընդունվում են մինչև 2016թ նոյեմբերի 18-ը ժամը 18.00-ն:

Լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար զանգահարել /0232/ 3-28-57

Մրցույթը անցկացվում է << կառավարության 2001թ օգոստոսի 16-ի թիվ 762 որոշման պահանջների համաձայն:

Մրցութային հանձնաժողով